ՑՈՒՑՈՒՄՆԵՐ
9-րդ դասարանի աշակերտների և ուսուցիչների համար

1. Պատասխանների ձևաթղթի լրացման կարգը

Քննության ընթացքում առաջադրանքներին պատասխանելու համար շրջանավարտը պետք է լրացնի պատասխանների ձևաթուղթ, որի ճիշտ լրացումից է նաև կախված աշակերտի քննական արդյունքը:



Պատասխանների ձևաթղթում ընտրովի պատասխանով յուրաքանչյուր առաջադրանքի համարի ներքևի մասում կա չորս վանդակ: Տրված առաջադրանքի ճիշտ պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է տվյալ պատասխանի համարին համապատասխանող վանդակում գրառել «X» նշանը: Օրինակ՝

Կարճ պատասխան պահանջող առաջադրանքների (ենթաառաջադրանքների) պատասխանների գրառման համար պատասխանների ձևաթղթում նախատեսված են համապատասխան տեղեր:

Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքները պետք է կատարել թեստ-գրքույկի համապատասխան տեղում (չեն անցկացվում պատասխանների ձևաթուղթ):

Աշակերտն ունի սխալ պատասխանն ուղղելու 3 հնարավորություն, որից 2-ը՝ ընտրովի պատասխանով, 1-ը՝ կարճ պատասխան պահանջող առաջադրանքների համար: Եթե անհրաժեշտ է փոխել սխալ նշված պատասխանը, ապա պատասխանների ձևաթղթի՝ սխալ նշված պատասխանները փոխելու տեղում անհրաժեշտ է նշել առաջադրանքի համարը և համապատասխան վանդակում գրառել «X» նշանը կամ գրել կարճ պատասխանը:

2. Գրավոր աշխատանքի գնահատման չափանիշները

Ընտրովի պատասխանով և կարճ պատասխան պահանջող առաջադրանքներից (ենթաառաջադրանքներից) յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Թեստերի ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքների (ենթաառաջադրանքների) գնահատման չափանիշները տրվում են յուրաքանչյուր առարկայի ուղեցույցում:

Ամփոփիչ վերջնական գնահատականը որոշվում է թեստի առաջադրանքներից աշակերտի վաստակած բոլոր միավորների գումարից, որը համապատասխանեցվում է գնահատման 20 միավորանոց համակարգին՝ համաձայն համապատասխան սանդղակի:

35 միավորանոց սանդղակ

Միավորներ	Գնահատական	Միավորներ	Գնահատական
0-1	1	15-17	11
2	2	18-20	12
3	3	21-23	13
4	4	24-26	14
5	5	27-28	15
6	6	29-30	16
7-8	7	31-32	17
9-10	8	33	18
11-12	9	34	19
13-14	10	35	20

3. Աշխատանքի համար հատկացվող ժամանակը

Քննական աշխատանքի կատարման համար հատկացվում է 120 րոպե (օտար լեզուներին՝ 90 րոպե):

Սիրելի՛ աշակերտ

Քննական թեստի առաջադրանքների կատարումը մեծ ուշադրություն է պահանջում: Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:

Առաջադրանքի պահանջը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է նախ ուշադիր կարդալ այն, ապա անցնել պատասխանի ընտրությանը կամ խնդրի լուծմանը:

Խելամի՛տ օգտագործեք ժամանակը: Թեստը լրացնելու համար սահմանափակ ժամանակ է տրվում, և, քանի որ առաջադրանքներն իրենց բնույթով տարբեր են ու կատարման համար շատ կամ քիչ ժամանակ պահանջող, ապա պետք է կարողանաք ձեր ժամանակը ճիշտ բաշխել: Եթե ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը դուք կարող եք օգտագործել սևագրության համար: Ընտրովի պատասխանով և կարճ պատասխան պահանջող առաջադրանքները կատարելուց հետո չմոռանա՛ք պատասխաններն ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում, իսկ ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքների կատարման համար թեստ-գրքույկի հատկացված տեղում պետք է մանրամասն ու հիմնավորված կատարել առաջադրանքի պահանջը:

Մաղթում ենք հաջողություն